



## **Կարգապահական գործ թիվ ԿԳ-20010**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2020 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 117-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ԹԻՎ ԿԳ/85-Ա**

### **ՓԱՏԱԲԱՆ ՄԱՅԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Հրանտ Անանյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի և Կարեն Մեծլումյանի կազմով,  
քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,  
քննության առնելով փաստաբան Մայիս Հովհաննիսյանին (արտոնագիր՝ թիվ 1724) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

### **Պ Ա Ր Զ Ե Ց՝**

#### **1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հարություն Մանուկյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է հետևյալը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (նախագահությամբ դատավոր Հարություն Մանուկյանի) վարույթում է գտնվել թիվ ԵԴ/0113/11/19 գործը՝ «ՀՀ ՀՔԾ ՀԿԳ ավագ քննիչ Ս. Մխիթարյանի 28.12.2018թ. քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու և ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության պետ Վ.Մուրադյանի 30.01.2019թ. կայացված բողոքը մերժելու մասին որոշումների դեմ» Մուշեղ Մարտինի Շահինյանի և Ալվարո Գուրգենի Կարախանյանի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

03.03.2020թ. որոշմամբ քննելով վերը նշված բողոքը Դատարանը մերժել է այն:

Նշված դատական ակտի դեմ 14.04.2020թ. բողոքաբերներ Մ. Շահինյանի և Ա.Կարախանյանի ներկայացուցիչ, փաստաբանների պալատի անդամ Մայիս Հովհաննիսյանը (**այսուհետ՝ նաև Փաստաբան**) ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Փաստաբանն իր վերաքննիչ բողոքում, անդրադառնալով դատական ակտի հիմնավորվածությանը, ի թիվս այլնի նշել է հետևյալը.

1. (...) Ակնհայտ է, որ Դատարանը իր «համերաշխ» ձեռքն է մեկնել նախաքննություն իրականացնող մարմնին և դատախազությանը, շարունակել է վերջինների կողմից որդեգրած ապօրինի գործելաոճը: (...)

2. (...) Եթե այդ մարմինները (պաշտոնատար անձինք) փորձեին բարեխղճորեն իրականացնել Պետության կողմից օրենքով սահմանված իրենց վրա դրված պաշտոնական պարտականությունները և ոչ թե չարաշահեին դրանք: (...)

3. (...) Ցավոք սրտի նախկին իշխանությունների որոշ հանցավոր պաշտոնատար անձանց ազդեցությունը պաշտպանվում է առ այսօր, որի անհերքելի ապացույցը՝ սույն գործով նախաքննական մարմնի, դատախազության և Դատարանի կողմից կայացված ապօրինի որոշումներն են: (...)

4. (...) Դատավոր Հ. Մանուկյանը արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունը բացակայում է, ընդ որում դատավորը որոշումը կայացրել է նույն ոգու դրսևորմամբ, ինչ նախաքննական մարմինը և դատախազությունը:

ԵՎ եթե նախաքննական մարմնի՝ քննիչ Ս.Մխիթարյանի և դատախազության մարմնի աշխատակցի կողմից ակտերի կայացման պրոցեսը տեսանելի չի եղել, ապա Դատարանի կողմից, մինչև բողոքարկվող որոշումը կայացնելը, մենք ականատես եղանք, թե ինչպիսի կերպարանափոխության ենթարկվեց դատավոր Հ. Մանուկյանը մինչև վերջին դատական նիստը վարելը:

Այսպես՝ եթե մինչև վերջին դատական նիստը 2020 թվականի մարտի 3-ի օրը, Հ. Մանուկյանը իր գործողություններով օբյեկտիվ դատարանի տպավորություն էր թողնում, ապա վերջին նիստի ժամանակ ակնհայտորեն զգացնել էր տալիս, որ գործի ելքն արդեն որոշված է ի վնաս բողոքաբերների և քննությունը շարունակելը ընդամենը ժամանակի ավելորդ վատնում կդառնա: (...)

5. (...) Դատարանը նույնպես ի դեմս դատավոր Հ. Մանուկյանի, Տոնեյանների, Արմեն Ավետիսյանի և մյուս հանցավոր անձանց հաճո դատական ակտ կայացրեց և միակ տպավորությունը, որը թողեց դատավոր Հ. Մանուկյանը վերջին դատական նիստի ժամանակ՝ նրա խեղճացած, աղերսական հայացքն էր, որով խնդրում էր մեզ չշարունակել դատական նիստը, քանզի անիմաստ է այն շարունակել իր նախագահությամբ, քանի որ ինքը ևս մերժելու է մեր բողոքը, ինչպես և մյուսները: (...)

6. (...) Սույն գործով դատական ակտ կայացնող Հ. Մանուկյանի կողմից ապօրինաբար կայացվել են անհիմն, չպատճառաբանված, ապօրինի որոշումներ: (...)

7. (...) Սույն գործով արդարության և ճշմարտության հաստատելուն խոչընդոտելը ոչ թե գործով ձեռք բերված ապացույցներն են, բացահայտված կամ չբացահայտված հանգամանքներն են, այլ վարույթ իրականացնող մարմինների պաշտոնատար անձինք, նրանց ապօրինի գործողությունները, շահագրգիռ մոտեցումը խնդրո առարկային, օրենքով և պետության կողմից նրանց վրա դրված պարտականությունները չկատարելը: (...)

8. (...) Չնայած մենք բազմիցս հայտարարել ենք, որ պաշտոնատար անձանց կողմից կատարված առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող գործողություններին իրավական գնահատական տալու հայտարարությամբ պետք է

դիմեն ՀՀ գլխավոր դատախազին, սակայն այդ դիմումը կներկայացվի, երբ կսպառենք դատական և այլ պաշտպանության բոլոր ատյանները: (...)

Դիմողը նշել է, որ փաստաբան Մայիս Հովհաննիսյանն անհարգալից վերաբերմունք է թույլ տվել դատարանի նկատմամբ, որը հանգեցրել է օրենքով, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքով փաստաբանի վարքագծի կանոնների և փաստաբանական էթիկայի սկզբունքների խախտման, որպիսի հանգամանքը հիմք է փաստաբան Մայիս Հովհաննիսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ Պալատ դիմում ներկայացնելու համար:

Վերոգրյալի հիման վրա Դիմողը խնդրել է փաստաբան Մայիս Հովհաննիսյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և քննարկել վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Դիմողը դիմումին կից ներկայացրել է Մայիս Հովհաննիսյանի կողմից ստորագրված 14.04.2020թ թվականի վերաքննիչ բողոքի պատճենը:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի 05.06.2020թ. թիվ 92-Ա/ԿԳ-20010 որոշման հիման վրա փաստաբան Մայիս Հովհաննիսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

10.06.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

## **3. Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.**

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացրել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

### **3.2. Փաստաբանի համառոտ բացատրությունը.**

09.07.2020 թվականին պալատ է մուտքագրվել (մուտք № 1532-20) Մայիս Հովհաննիսյանի բացատրությունը, որում նա հայտնել է հետևյալը.

Թիվ ԵԴ/0113/11/19 քրեական գործով բերված վերաքննիչ բողոքը ստորագրվել է ինչպես բողոքաբերների, այնպես էլ իր կողմից՝ որպես նրանց ներկայացուցիչ:

Վերջինս նաև հայտնել է, որ վերոնշյալ վերաքննիչ բողոքում տեղ գտած դիրքորոշումը, մասնավորապես Դիմողի կողմից որպես վիրավորանք և զրպարտություն ներկայացվող արտահայտությունները, իրականում վիրավորանք չեն պարունակում և վերջինս, իր ներկայացրած վերաքննիչ բողոքով, Դիմողին վիրավորելու կամ զրպարտելու որևիցե միտում չի ունեցել:

Արձանագրված ձևակերպումներով նպատակ չի հետապնդվել վիրավորել կամ գրպարտել Հայաստանի Հանրապետության գործող իրավական համակարգը, առավել ևս՝ առանձին դատավորի: Բողոքաբերներն ընդամենը թղթին են հանձնել իրենց անձնական տպավորությունը և կարծիքը:

Փաստաբանը հայտարարել է, որ նշված ձևակերպումները իր վստահորդների կարծիքն են արտահայտում և բարձրացված հարցերի շուրջ առավել ուշադրություն հրավիրելու նպատակ են հետապնդել: Դրանք որպես վիրավորանք կամ գրպարտություն ընկալելու ո՛չ հիմքեր, ո՛չ էլ պատճառներ չկան:

Պալատի խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացել է և ըստ էության հաստատել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

### **3.3. Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

### **4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

07.08.2020 թվականին Նախապատրաստողը կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 10.08.2020 թ.-ին:

Պալատի խորհրդի նիստերը տեղի են ունեցել 06.10.2020թ. և 24.11.2020թ. ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ նաև Կանոնագիրք) հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

***Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.***

- Փաստաբանը թիվ ԵԴ/0113/11/19 քրեական գործով հանդիսանում է Մուշեղ Մարտինի Շահինյանի և Ալվարո Գուրգենի Կարախանյանի ներկայացուցիչը: Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Փաստաբանի կողմից ստորագրված վերաքննիչ բողոքի պատճենով:

- Փաստաբանը ստորագրել է վերաքննիչ բողոք, որում նշված են հետևյալ արտահայտությունները.

(...) Ակնհայտ է, որ Դատարանը իր «համերաշխ» ձեռքն է մեկնել նախաքննություն իրականացնող մարմինն և դատախազությանը, շարունակել է վերջինների կողմից որդեգրած ապօրինի գործելաճր: (...)

(...) Եթե այդ մարմինները (պաշտոնատար անձինք) փորձեին բարեխղճորեն իրականացնել Պեպության կողմից օրենքով սահմանված իրենց վրա դրված պաշտոնեական պարտականությունները և ոչ թե չարաշահեին դրանք: (...)

(...) Ցավոք սրտի նախկին իշխանությունների որոշ հանցավոր պաշտոնատար անձանց ազդեցությունը պաշտպանվում է առ այսօր, որի անհերքելի ապացույցը՝ սույն գործով նախաքննական մարմնի, դատախազության և Դատարանի կողմից կայացված ապօրինի որոշումներն են: (...)

(...) Դատավոր Հ. Մանուկյանը արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունը բացակայում է, ընդ որում դատավորը որոշումը կայացրել է նույն ոգու դրսևորմամբ, ինչ նախաքննական մարմինը և դատախազությունը: ԵՎ եթե նախաքննական մարմնի՝ քննիչ Ս.Մխիթարյանի և դատախազության մարմնի աշխատակցի կողմից ակտերի կայացման պրոցեսը տեսանելի չի եղել, ապա Դատարանի կողմից, մինչև բողոքարկվող որոշումը կայացնելը, մենք ականատես եղանք, թե ինչպիսի կերպարանափոխության ենթարկվեց դատավոր Հ. Մանուկյանը մինչև վերջին դատական նիստը վարելը: Այսպես՝ եթե մինչև վերջին դատական նիստը 2020 թվականի մարտի 3-ի օրը, Հ. Մանուկյանը իր գործողություններով օբյեկտիվ դատարանի տպավորություն էր թողնում, ապա վերջին նիստի ժամանակ ակնհայտորեն զգացնել էր տալիս, որ գործի ելքն արդեն որոշված է ի վնաս բողոքաբերների և քննությունը շարունակելը ընդամենը ժամանակի ավելորդ վատնում կդառնա: (...)

(...) Դատարանը նույնպես ի դեմս դատավոր Հ. Մանուկյանի, Տոնեյանների, Արմեն Ավետիսյանի և մյուս հանցավոր անձանց հաճո դատական ակտ կայացրեց և միակ տպավորությունը, որը թողեց դատավոր Հ. Մանուկյանը վերջին դատական նիստի ժամանակ՝ նրա խեղճացած, աղերսական հայացքն էր, որով խնդրում էր մեզ չշարունակել դատական նիստը, քանզի անիմաստ է այն շարունակել իր նախագահությամբ, քանի որ ինքը ևս մերժելու է մեր բողոքը, ինչպես և մյուսները: (...)

(...) Սույն գործով դատական ակտ կայացնող Հ. Մանուկյանի կողմից ապօրինաբար կայացվել են անհիմն, չպատճառաբանված, ապօրինի որոշումներ: (...)

(...) Սույն գործով արդարության և ճշմարտության հաստատություն խոչընդոտելը ոչ թե գործով ձեռք բերված ապացույցներն են, բացահայտված կամ չբացահայտված հանգամանքներն են, այլ վարույթ իրականացնող մարմինների պաշտոնատար անձինք, նրանց ապօրինի գործողությունները, շահագրգիռ մոտեցումը խնդրո առարկային, օրենքով և պետության կողմից նրանց վրա դրված պարտականությունները չկատարելը: (...)

(...) Չնայած մենք բազմիցս հայտարարել ենք, որ պաշտոնատար անձանց կողմից կատարված առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող գործողություններին իրավական գնահատական տալու հայտարարությամբ պետք է դիմեն ՀՀ գլխավոր դատախազին, սակայն այդ դիմումը կներկայացվի, երբ կսպառենք դատական և այլ պաշտպանության բոլոր ատյանները: (...):

Սույն փաստը հաստատվում է ներկայացված վերաքննիչ բողոքի պատճենով

և Փաստաբանի բացատրությամբ:

**6. Փաստաբանի անձր բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Մայիս Հովհաննիսյանը փաստաբան է հանդիսանում 06.10.2013 թվականից, և 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է երկու կարգապահական վարույթ, որոնցով Փաստաբանի նկատմամբ կիրառված «նկատողություն» կարգապահական տույժերը մարված են:

**7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մայիս Հովհաննիսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

*«Փաստաբանության» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

*Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

*Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

*Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Այս առումով կարևոր է հիշել, որ փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:*

*Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, նրա վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, այդ թվում՝ իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես:*

*Փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծի դրսևորումից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել նրա՝ որպես իրավապապաշտպան գործառույթ իրականացնող իրավաբանի հեղինակությունը, ազնվությունն ու*

անձեռնմխելիությունը: Հակառակ պարագայում փաստաբանի ոչ բարեխիղճ վարքագիծը բացասական ազդեցություն է ունենում ինչպես այդ փաստաբանի, այնպես էլ փաստաբանության ինստիտուտի հանրային վարկանիշի վրա:

Փաստաբանը պարտավոր է ենթարկվել դատավարական կանոններին՝ ներառյալ հարգանքով վերաբերվել դատարանին և դատավարության մյուս մասնակիցներին: Միևնույն ժամանակ փաստաբանի սույն պարտականությունը որևէ կերպ չպետք է կաշկանդի փաստաբանին իր վստահորդի շահերն անվախ պաշտպանելու հարցում՝ ընդհուպ մինչև հաշվի չառնելով սեփական շահերը կամ իր նկատմամբ ցանկացած հետևանք, որը կարող է ծագել նաև դատավորի գործողությունների հետևանքով: Այսինքն՝ փաստաբանը, դատարանում ներկայացնելով իր վստահորդի շահերը, պարտավոր է ապահովել ողջամիտ հավասարակշռություն իր մասնագիտական պարտականությունները ջանասիրաբար և բարեխղճորեն կատարելու և դատարանի ու դատավարության մասնակիցների նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցաբերելու պարտականությունների միջև:

Հետևաբար, պետք է տարանջատվի փաստաբանի օրինական և պատշաճ վարքագիծ դրսևորելու պարտականությունը փաստաբանի մասնագիտական և դատավարական անկախությունից, որը պետք է երաշխավորվի, և մասնավորապես, դատարանի նկատմամբ պատշաճ վերաբերմունք դրսևորելու պահանջը չպետք է մեկնաբանվի այնպես, որ խոչընդոտվի իր վստահորդի շահերն անկաշկանդ և անվախ ներկայացնելու փաստաբանի իրավունքը:

Ընդ որում, փաստաբանի սույն պարտականությունները և երաշխիքները տարածվում են նրա թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի (կազմված դատավարական և այլ փաստաթղթերի) վրա:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի սույն երկակի պարտականությունը բխում է փաստաբանի սոցիալական դերից և նշանակությունից և դրանով պայմանավորված՝ փաստաբանի պատասխանատվությունից մի կողմից վստահորդի առջև, իսկ մյուս կողմից՝ դատական իշխանության, որի գործառույթների պատշաճ իրականացմանը նպաստելուն է նպատակաուղղված փաստաբանի գործունեությունը: Փաստաբանը կարող է պատշաճորեն և արդյունավետորեն ներկայացնել և պաշտպանել իր վստահորդի շահերը միայն այն դեպքում, երբ ինքն ազատ է դատարանի, պետական այլ մարմինների և մասնավոր անձանց անօրինական և անհամաչափ ազդեցությունից: Միևնույն ժամանակ փաստաբանի սոցիալական կարգավիճակից բխում է նրա առաքելությունը նպաստել արդարադատության իրականացմանը, որը կարող է պատշաճ իրացվել, եթե փաստաբանը դատարանի և դատավարության մասնակիցների հետ հարաբերություններում գործի օրինականության և փաստաբանական էթիկայի շրջանակներում:

Պալատի խորհրդի նշյալ եզրահանգմանը համահունչ է նաև միջազգային պրակտիկան:

**Եվրոպայում փաստաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների հռչակագրի (այսուհետ՝ նաև Հռչակագիր) «a» սկզբունքի համաձայն՝ իր վստահորդին խորհրդատվություն տրամադրելիս կամ վստահորդին ներկայացնելիս փաստաբանը պետք է լինի ազատ քաղաքականապես, տնտեսապես և մտավոր**

առումով: Դա նշանակում է, որ փաստաբանը պետք է անկախ լինի պետական կամ այլ ազդեցիկ շահերից...

**Եվրոպայի փաստաբանների վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ նաև ԵՓՎԿ) 2.1.1 ենթակետի համաձայն՝** փաստաբանի բազմաթիվ պարտականություններ պայմանավորված են փաստաբանի բացարձակ անկախությամբ, ցանկացած ազդեցությունից ազատությամբ՝ հարկապես... արտաքին ճնշումից: Այդպիսի անկախությունը նույնչափ անհրաժեշտ է արդարադատության գործընթացի նկատմամբ վստահության համար, որքան դատավորի անկողմնակալությունը: Հետևաբար, փաստաբանը պետք է խուսափի իր անկախությանը որևէ խոչընդոտից և իր մասնագիտական չափորոշիչների ստորադասումից ...դատարանին... հաճոյանալու նպատակով:

**ԵՓՎԿ-ի 2.1.2 ենթակետի համաձայն՝** սույն անկախությունն անհրաժեշտ է ոչ դատական և դատական գործերով: Փաստաբանի խորհրդատվությունն անարժեք է, եթե կատարվում է...՝ ի պատասխան արտաքին ճնշման:

Վերոնշյալ միջազգային իրավական ակտերում պետական կամ արտաքին ճնշման ներքո հասկացվում է նաև դատարանի հնարավոր ոչ իրավաչափ կամ անհամաչափ ազդեցությունը, որը կարող է սահմանափակել փաստաբանի անկախությունը դատարանում ներկայացուցչություն իրականացնելիս:

Բացի այդ, Խորհուրդը գտնում է, որ դատավարության ընթացքում դատարանի և փաստաբանի՝ որպես դատավարության տարբեր սուբյեկտների դիրքորոշումները կարող են չհամընկնել և առաջացնել հակասություն, որի հետևանքով փաստաբանն իր վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու ընթացքում կարող է հանդիպել դատարանի որոշակի հակազդեցության:

Այս տեսանկյունից և ելնելով փաստաբանի գործունեության երաշխիքներից՝ որևէ փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու հարցը քննարկելիս փաստաբանը պետք է ունենա պաշտպանվածության բարձր իրավական շեմ:

Վերոգրյալը համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Խորհուրդն ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ ներկայացված վերաքննիչ բողոքը ստորագրված է ոչ միայն փաստաբանի, այլ նաև իր վստահորդների կողմից:

Նման պայմաններում Խորհուրդն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- **արդյոք վերաքննիչ բողոքում շարադրված արտահայտությունները նպատակ են հետապնդել անհարգալից վերաբերմունք դրսևորել դատարանի նկատմամբ, թե ուղղված են եղել վստահորդների համար ցանկալի արդյունքին հասնելուն:**

Խորհուրդն արձանագրում է, որ չի հաստատվել այն փաստը, որ վերաքննիչ բողոքում նշված արտահայտությունները նպատակ էին հետապնդում անհարգալից վերաբերմունք դրսևորել դատարանի նկատմամբ և վերաքննիչ բողոքում շարադրված հանգամանքները նպատակ են հետապնդել լավագույնս ներկայացնել վստահորդի շահերը:

Ըստ էության Փաստաբանը չի անդրադարձել դատավորի անձին, այլ վերլուծել է իր կարծիքով իրավական երևույթները և դատարանի՝ իր ընկալմամբ թույլ տված, որոնք թեև խիստ են, այդուհանդերձ անձնավորված չեն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադառնալով փաստաբանների կողմից խոսքի և արտահայտման ազատության սահմանների առանձնահատկություններին՝ 21.06.2002թ. Աննա Նիկուլան ընդդեմ Ֆինլանդիայի գործով կայացված որոշմամբ հստակ նշել է. «Չնայած փաստաբանները նույնպես իրավասու են հրապարակայնորեն մեկնաբանություններ ներկայացնել արդարադատության համակարգի վերաբերյալ, սակայն նրանց քննադատությունները չպետք է անցնեն թույլատրելի սահմանները: Այս տեսանկյունից պետք է հաշվի առնվի փարբեր շահերի միջև հավասարակշռությունը՝ մի կողմից հասարակության իրավունքը ստանալ տեղեկություններ դատական ակտերից բարձրացող հարցերի վերաբերյալ, մյուս կողմից արդարադատության իրականացման պարզաճ պահանջների և իրավաբանի մասնագիտության արժանապատվության միջև: ... Դիմումատու մեղադրեց դատախազին ապօրինի վարքի մեջ, բայց այս քննադատությունն ուղղված էր պաշտպանության ռազմավարությանը, որը ենթադրաբար ընտրել էր փաստաբանը: Չնայած ընտրված որոշ ոչ ճիշտ պայմանների, Դիմումատուի քննադատությունը սահմանափակվել է դատախազի ներկայացրած փաստարկներով ուղղված իր վստահորդի դեմ և ոչ թե դատախազի պրոֆեսիոնալ կամ այլ որակների դեմ: Այս դատավարական համատեքստում դատախազը պետք է հանդուրժողաբար վերաբերվեր Դիմումատուի՝ որպես պաշտպանի քննադատությանը: Դատարանը նաև արձանագրում է, որ քննադատությունը դատարանի դահլիճում է հնչել և ոչ թե օրինակ մամուլով: Այս տեսանկյունից Դիմումատուի իրավունքի սահմանափակումը պայմանավորված չի եղել հասարակական խիստ պահանջարկով»:

Նշված գործի շրջանակներում ՄԻԵԴ-ը հստակեցրել է փաստաբանի խոսքի ազատության սահմանները ներկայացնելիս ուշադրության արժանի շահերը, որոնց մեջ առանձնահատուկ դեր է հատկացրել այն քննադատությանը, որը վերաբերում է ոչ թե անձին, այլ նրա գործողությանը և նպատակ է հետապնդում պաշտպանել վստահորդի շահը: Նման հանգամանքների զուգորդման դեպքում ՄԻԵԴ-ը թույլատրելի է համարել փաստաբանների կողմից հնչեցրած քննադատական կարծիքները՝ այդ թվում ոչ միշտ քաղաքավարի ձևով (ընդգծումը Խորհրդինն է):

Վերոգրյալը հաշվի առնելով Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա չէ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.2.2 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ հոդվածի, 39.6-րդ, 39.8-րդ հոդվածների պահանջներով՝ Խորհուրդը

### **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբան Մայիս Հովհաննիսյանի (արտոնագիր՝ թիվ 1724) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:**

**2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Մայիս Հովհաննիսյանին և Դիմողին:**

*Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի  
խորհրդի անդամ՝

Հրանտ Անանյան

**24 նոյեմբերի, 2020թ.  
թիվ ԿԳ/85-Ա  
ք. Երևան**